

9 Սեպտեմբեր

Վա՛յ անոնց, որ կը յանդգնին *Հայաստան* բառն արտասանել...:

Դատական նախարարութեան կողմէն ծանուցագիր մը դրկուեցաւ Պատրիարքարան, խստիւ պատուիրելով Ս. Պատրիարքին, որ այսուհետեւ չգործածէ *Հայաստան* բառը:

Բաց ի այս պատուէրէն՝ ծանուցագիրն կարգելէ Ս. Պատրիարքին՝ Բ. Դրան *թաքրիք* գրել այն խնդիրներու համար, որք կրօնականին հետ բնաւ վերաբերութիւն չունին: Կրօնական խնդիրներու համար Ս. Պատրիարքը պիտի վայելէ *թաքրիք* գրելու շնորհը, իսկ երբ մեր ինչքն, կեանքն ու պատիւը բռնաբարուին՝ Ս. Պատրիարքը լռութիւն պահելու է եղեր:

Դատական նախարարութիւնն ծանուցագիր մ'ալ քիւրդերուն դրկելու է, ծանուցանելով իրենց՝ որ այսուհետեւ մեր ընչից, կենաց եւ պատուոյն խնայեն եւ մեր կրօնքը միայն բռնաբարեն...:

10 Սեպտեմբեր

Քարաքաշեանի Աշխարհագրութիւնը հրատարակուեցաւ այս օրերս:

Պ. Քարաքաշեան Մուշ եւ Վան քաղաքները Քիւրդաստանի մէջ դնել բարեհաճած է այս անգամ, մինչդեռ 1866 - ի Աշխարհագրութեանը մէջ Հայաստանի մէջ շինած էր այդ քաղաքները:

Ի՞նչ նպատակաւ արդեօք այդ քաղաքները Հայաստանէն Քիւրդաստան փոխադրուած են... ո՞ր աշխարհագրութենէ քաղած է իւր տեղեկութիւններն պ. Քարաքաշեան... – Լօրդ Բիկօնսֆիլդի աշխարհագրութենէն անշուշտ...:

11 Սեպտեմբեր

Վարչական կազմակերպութեան ծրագիրն քուէարկութեամբ ընդունուեցաւ երեսփոխանական ժողովէն եւ Պատրիարքին յանձնուեցաւ ի գործադրութիւն:

Մինչեւ հիմայ վարչական դրութեան վրայ կը բեռցունէինք այն բոլոր սխալները, զորս կը գործէինք վարչութեան մէջ. տեսնենք այսուհետեւ ո՞վ պատասխանատու պիտի ըլլայ մեր սխալ քայլերուն... արդեօք մէկ երկու տարիէն ետքը այս նոր դրութիւնն ալ չպիտի՞ բամբասենք:

12 Սեպտեմբեր

Ազգային նոր հանդէս մ'ալ աւելցաւ: